

յարդարման համար կային առանձին արհեստաւորներ ստրկուհիներից և իւրաքանչյուր ձևի յարդարման համար առանձին մասնագէտներ. իւրաքանչյուրը սրանցից հազիւ շատ ամիսների ընթացքում կարողանում էր կարեւոր հմտութիւնը ձեռք բերել:

Մինչև անգամ իրաւաբանները վիճաբանում էին, թէ որքան ժամանակեայ վարդութիւնից յետ կարելի է ստրկուհուն տալ վարայարդիչի (Ornatix) կոչումն:

(Եաբունուէլէ)

ՄԻԱՑԵԱԼ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ

ՈՒՍՄԱՆ ԱԽԵՆԴԵԼՈՒ ԵՂԱՆԱԿ

Յունիսի 10-ին Հայրապետական կոնգակով առաջնորդներին ի թիւս այլոց պատուիրած է, որ գրամական եկամուտի սակաւութեան գէպքեքերում՝ ուսումնարանների բաժանմունքները միացնեն մի դասարանի մէջ:

Այս տեսակ ուսումնարանի ծախքը երեք անգամ աւելի թեթև է նստում, քան կանոնաւոր կերպով կաղմած ուսումնարանի դրամական պահպանութիւնը. Եւ հէնց այս հանգամանքը մեծ հրապոյր կարող է դառնալ հօդաբարձութեանց համար, որ առանց դժուարանալու իրանց նախահաշիւները կազմեն միացեալ բաժանմունքներով ուսումնարանի բացման համար. — Հետեւեալ տողերով մենք կուզենայինք զգուշացնել, թէ այդպիսի տնաեսութիւնը են հասկ լոկ միայն դրամի վասնութիւն և տաերեցիթ անտեսութիւնը կը լինի. Ենու ինուցիւ ծանրութիւնը եւ բայց հաճախաներու չ նէսոյ լուսունի.

Միացեալ բաժանմունքների յաջող կառավարութիւնը՝ լաւ փորձ կարող է համարուիլ մի ուսուցչի մանկավարժական հմտութիւնը ստուգելու համար. Ավ որ կարող է մի շաբաթ շարունակ այնպէս աւանդել ուսումը միացեալ բաժանմունքների մէջ, որ բոլոր բաժանմունքների աշակերտները բան սովորեն, անգործ չը մնան, երագիրն էլ հնարաւորութեան շափով անիւախ պահպանուի, նա փառաւոր ուսուցիչ է. Բոյց ո՞րո՞ն է դոյց թիւ-ը և մէջ:

Միացեալ բաժանմունքներով ուսում տալը նոր բան չէ. Արեւեան Գրէկուների մէջ ուսումը ուրիշ կերպ չի աւանդվում. Մեր հին ուսում-

Նարանները ամենքն էլ այդպիսի կազմակերպութիւն պիտի ունենացին և օ-
թանասուն թուականներում Թիֆլիսի բոլոր ծխական ուսումնաբանները
միացեալ բաժանմունքներ ունեին. Այդ կարգի ուսումնաբաննի լաւագուը
79 թուականնին մննք տեսել ենք Ա.անի մէջ՝ որ կարող էր ամաչացնել
Թիֆլիսի ծխական ուսումնաբաններին:

Անք չը պէտք է զարմանանք, եթէ ժամանակի և տեղի հանգամանք-
ները ստեղծում են պարզ ուսումնաբաններ, բայց նոյց մէջ էլ կան ի-
րանց չափի համեմատ՝ լաւն ու յուրին: Վանի ռազմութիւններին ամի-
և առաջ մի եւու ըստը սրահ, գրեթէ այնքան ընդարձակ ինչքան որ
մեր շատ եկեղեցիներն են, մի հանգամանք — որ ամենամեծ կարևորու-
թիւն ունի գործի համար: Այն տեղ 80-ի չափ զանազան հասակի և
զանազան ուսումնական աստիճանի աշակերտներ, գիմացէքիմաց նստած:
երկու կարգ շարուած էին պատերի երկարութեամբ, այնպէս որ սրահի
մէջ տեղը արձակ էր և ուսուցիչը կարող էր ամեն աշակերտին մօտենալ:
որ դաս տայ, նոցա մէջ կային այրբենաբան, սաղմոս, քերականութիւն
կարդացող և գիր գրել սովորող խումբեր: Մինչև ուսուցիչը մի խմբի
հետ պարագում էր միւսները իրանց լուս պարապմունքների ունեին. և
սրահի մէկ ծայրից ձայնը գրեթէ չէր հասնում մինչև մրտօր: Աւուցիչը
ամենայն օր ժամանակ էր գտնում բոլոր խմբերի
հետ զբաղուելու. մի ուրիշ հանգամանք — որ նոյնպէս մեծ կարևորու-
թիւն ունի. Ի հարկէ ոչ ծրագիր կար, ոչ օրական պարապմունքների ժա-
մեր ոչ ուսումնական գիտութելու համար սահմանած տարիների տեղու-
թիւն, այլ հանգստանում էին, երբ որ ձանձրանում էին, ուսումը աւար-
տած էին համարում: Քանի տարուայ ընդունակութիւն որ ցոյց էր տա-
լիս այս կամ այն աշակերտը. այն տեղ չը կար գրասեղան, դասարանի
գրատախտակ — մեր ձեռով Մի խօսքով՝ ասիական էր ուսումնաբանը,
բայց ըստ իւր տեսակի լաւագոյն էր:

Այժմ գանք Թիֆլիսին: Սորա ծխական ուսումնաբանները անշուշտ
երպական երեսոյթ ունեին. այդ տեղ կը տեսնէինք գրատախտակ, զբա-
ղագան. Նոքա ունեին ծրագիր, գէթ թղթով. օրական դասերը ժամերի
էին բաժանած և այլն: Սոցա իսկական ծրագիրը ներսիսեան գպրոցն էր:
Ծիսական ուսումնաբանները այն գպրոցին մօտ լինելով բնականաբար
միշտ ձգտում էին աշակերտներ պատրաստել նորա համար: Գպրոցի այս-
պիսի աղդեցութիւնը ծխական ուսումնաբանների վերայ մի կողմից ան-
նպառ էր: Ծիսական ուսումնաբանի ուսուցիչը ստիպում էր իւր բազմա-
թիւ աշակերտներից միայն այնպիսիների հետ լուրջ պարապել որոնք գպրո-
ցի աշակերտ գառնալու՝ այսինքն այն տեղ քննութիւն տալու էին պատ-
րաստվում: Իսկ միւսներին նա թողնում էր աշունչ ու բարձր իրանց բախտին:

Թիֆլիսի ուսուցիչը միացեալ բաժանմունքների խնդիրը շատ պարզ կերպով էր լուծել: ինքը ուսնենալով մի փոքր սենեակ բաղմաթիւ աշակերտներով ճխտած, աշագին գրասեղաններն էլ մէջը այնպէս իրար կտպած և դասաւորած, որ ինքը արձակ տեղ չէր ստանում մօտենալու և տեսնելու, թէ ինչ է կատարում աշակերտը: — նա ամբողջ տարի բան ու գործ էր շինուամ՝ առաջն նստածներին պատրաստել ներս. գպրոցի համար, իսկ միւսներին առանց խղճալու մատնում էր անդործութեան: ներս. գըպրոցը միշտ գանգատուել է, թէ իւր աշակերտները հասակով մէջ, աշխատասիրութեամբ ծոցը դանդառու և անուշէ՞ են. արդեօք գլխաւոր պատճառը այն չէ, որ նոքա ծխական ուսումնարաններում Յ տարուայ փոխարէն՝ Յ տարի են նստել, այն ևս ժամանակի մեծ մասը միանդամայն անդործ կամ զրավաստակ անցուցանելով: — Խօսք չը կայ, թէ Հայրաբետական կոնդակի իմաստը այն չէ, որ այսպիսի ուսումնարաններ վերստին կենդանութիւն առնեն: Բայց անշուշտ աւելի արդիւնք էլ չենք ունենայ, եթէ հոգաբարարձուները խնդրին նայեն միայն նիւթական տնտեսութեան կողմց:

Միացեալ բաժանմունքների հին գրութիւնը նկարագրելով, «չ այնքան ուսուցչի անփորձութեան վերայ պէտք է կենանք, որքան ի նկատի պէտք է առնունք գործի արդարեւ մեծամեծ գուարութիւնները: Արդէն հասարակ հաշիւը ցոյց է տալիս, թէ զոր օր. միդասեան ուսումնարանը՝ եթէ կազմուած լինի ոչ միացած բաժանմունքներով շաբաթական 73 դաս պիտի ունենայ, իսկ բաժանմունքները միացած ժամանակ՝ ընդ ամէնը 26, այսինքն գրեթէ Յ անդամ պակաս, մինչդեռ ծրագիրը երկու կարգի համար էլ միւնցոյն է, Արդ ինչ հար կայ մի և նոյն գործը Յ անդամ պակաս ժամանակում կատարել. սա անտարակիյս պէտք է մոդական խնդիր համարուի: Մենք պնդում ենք, թէ ոչ մի մանկավարդժական արուեստով և հարագիտութիւններով լուրջ է բանն այն տեղ հասցնել, որ միացեալ-ները պնդան հիմնաւոր գործ արտադրեն, որքան որ կարող են կատարել ոչ միացած բաժանմունքները: Ուրեմն միշտ մի վնաս կայ բաժանմունքները միացնելուց, հետևապէս պէտք է այդ բանից զգուշանալ:

Բայց կարելի է գործը այնպէս առաջ տանել՝ որ վնասը քիչով տուժուի: Թիֆլիսի ծխական ուսումնարանները խնդիրն այնպէս էին լուծել, որ զոր օր. Յ տարուայ աշխատատութիւնը՝ Յ տարի էին ձգձգում, այն ևս միշտ աւելի պարապելով բարձր բաժանմունքի հետ. էլի փառք ու պատիւ իրանց, որովհետեւ թուաբանական հաշուով նոքա կարող էին մինչև անդամ 9 տարի գործ դնել: Բայց մենք տեսանք, որ նոցա աշակերտներն էլ ոչ միայն իրանց մատաղ հասակը զուր կերպով էին կորցնում, այլ ի վերջո դուրս էին գալիս անուշիմ, ծոյլ ու գանդաղ, որ վնասնե-

րի ամենամեծն է, այս նշանակում է ամբողջ ապագայ գործունեութեան եռանդի արմատը՝ հենց այս գլխից փոտեցնել:

Մեծ անարդարութիւն է, երբ որ ուսումնարանի բաժանմանց մէկը միւս ներից աւելի է գերադասվում և ժամանակի մեծագոյն մասը նրան է նուիրվում: Ժամանակի արդար բաշխումը այն կը լինի, եթէ ուսուցիչը ամենայն օր և ամենայն ժամ փոփօխակի զբաղուի հուշը բաժանմունքների հետ և մինչդեռ մէկին ինքը անձամբ դաս տայ, այդ ժամանակ միւսները ունենան շուրջ ուսուցիչը: Այս եղանակով թէպէտ 26 դասը՝ 73 չի դառնայ, բայց գոնէ բոլոր աշակերտները մի մի բան կը սովորեն և իւրեանց աշխայժը չեն կորցնի: Միայն այս բանի համար հարկաւոր է, որ ուսուցիչը փոքր ինչ հմուտ լինի, և ուսումնական պարագաներն ու պիտոյքները յարմար և բաւական լինին: — Երբէք չենք մոռանայ այն տպաւորութիւնը, որ Զուիցերիայի մի ուսումնարան մեր վերայ գործեց, ուր միացած էին երկու բաժանմունքներ: Մտանք մի ահագին սրահ՝ ցանցառ սիւներով երկուսի բաժանած, մաքուր՝ լցուը առատ, շարժուելու տեղը շատ գեղեցիկ կահաւորած, բաժանմանց գրասեղանները մեծ միջանցքով իրարից հեռացրած, իւրաքանչիւր բաժանմունքի համար մի մեծ գրասահոտակ: Աւսուցիչը աշակերտներին հանգիստ և արագ բաժանել տուեց դասի համար հարկաւոր գրքերը, գրասահոտակները, քարեզրիչները և այլն: Մօտեցաւ փոքր բաժանման մեծ տախտակին, զրեց մի քանի թուարանական խնդիրներ, աշակերտները լուրջ և անաղմուկ հետեւում էին նորա գրածին: այնուհետեւ փոքրերին պատուիրելով, որ խնդիրները իրանք լուծեն, ինքը անցաւ մեծերի կողմը, որ նոցա դաս տայ, Մինչև որ մեծերը դաս էին առնում, փոքրերը ամենամեծ եռանդով իրանց գործի էին, գրում, գծում էին, գրածը ուղղում, ջնջում, նորից սրբագրում էին, և քարեզրիչը իրանց առաջև գնելով՝ համբերութեամբ սպասում էին: որ ուսուցիչը դայ և ստուգէ իրանց կատարածը: Մի քառորդ ժամի պարագմունքը ապացոյց էր, թէ որքան աշխատութիւն էր սերմանած մինչև այդ ժամանակ ուսման և կարգապահութեան համար, որ այսպէս առատ հունձ տուեց:

Մեր ուսուցիչներն էլ գիտեն լուռ զբաղմանց արժեքը, բայց նոցա չի յաջողվում այդ զէնքի նպաստակաւ գործածութիւնը: Նոցա աշակերտները շուտ են նկատում, որ իրանց զբաղեցնում են դոյն շուրջ մէկ շնեւում, այս կասկածը մի թոյն է: որ պղտորում է նոցա միտքը: նոքա չեն զսպիում և հակառակի պէս . . . իրօք շարութիւններ են հնարում:

Լուռ զբաղմանց զլիսաւոր նպաստակը շարութեան առաջն առնելը չէ, այլ նոքա լրումն պէտք է տան մի սկսած՝ բայց կիսատ մնացած գործին. նա էլ ուրեմն մի լուրջ գործ է: Աւսման ամենայն արդիւնքը երկու աստի-

ճանով է ձեռք բերում աշակերտը, որ նա փոփոխակի կատարում է նախ կրաւորական՝ ապա ներդործական դեր: Երբ որ ուսուցիչը դաս է աւանդում, մտքերը բացարում է, նոր գաղափար է տալիս, այն ժամանակ աշակերտի ուշադրութիւնը լարուելով՝ կրաւորական վիճակ է տալիս նորան, — նա ուրեմն միայն լսում է. բայց երբ որ այդ լսածը, բացարածը եփվում է աշակերտի գլուխ մէջ, շարժում է նորա ջղային գործողութիւնը, այն ժամանակ աշակերտը թողնում է իւր կրաւորական դիրքը և ստանում է ներդործական վիճակ. սկսում է խոկալ, մատածել աւանդածի մասին, նորը իւր հին մոքերի հետ հաշտեցնել, միացնելով և այս բոլոր պաշարը գործադրել: Արդ որպէս զի լուս զբաղմունքը յարմարապէս ընդունէ՝ պէտք է այս հանդամանքը միշտ ի նկատի ունենալ, ապա թէ ոչ զուր կանցնի ուսուցի աշխատութիւնը:

Բայց արդեօք ընթերցողը նկատեց, որ մնաք մասսամբ մերձեցանք մոդական խնդրի լուծման. 26 դասը թէպէտ 73 չի դառնում, բայց և այնպէս 26-ից աւելի զօրութիւն է ստանում: Իւրաքանչիւր բաժանմունք կարող է ամենայն ժամ ստանալ և կրաւորական և ներդործական պարապմունք. եթէ բաժանմունքների թիւը երկու է, նոքա ուրեմն մի ուսուցչի ձեռքի տակ մի ժամում կզբաղուին ոչ թէ կէս կէս ժամ, ինչպէս որ առ երևոյթս է, այլ արդեամբ մի մի ժամ, որով ուսման մի ժամը զարմանալի կերպով դառնում է երկու. իսկ եթէ բաժանմունքների թիւը երեք է, մի ժամը երեքի կշիռ կստանայ: Այս հաշիւը այն ժամանակ ճշմարիտ կը լինի: Ենիւ բարձրացնելը հարութեալ ընդունեն, այնպէս որ լուս աշխատութեան ժամանակ՝ աշակերտը կարողանայ իւր հոգեկան բալոր զօրութիւններով գործ տեսնել:

Դնանք առաջ և տեսնենք, թէ բացի ժամերը փոփոխակի արդարութեամբ կարգաւորելուց, ել ուրիշ ի՞նչ հնար կայ ժամանակը աւելի օգտավ տնտեսելու:

Եթէ երկու միացեալ բաժանմունքներում մի ժամը այնպէս կիսուի, որ իւրաքանչիւրի հետ ուսուցիչը կարողանայ փոփոխակի կէս կէս ժամ զբաղուիլ. կամ երբ որ ժամի մի երրորդ մասը նուիրուի մի բաժանմունքին, եթէ երեք են միացած բաժանմունքները, — այս գեպքերում, իսկապէս ասելով բաժանմունքները վնա ժողովու, այլ իւրաքանչիւրը դարձեալ առանձնակի և զբաղվում էր յատուկ գործով: Միայն թէ երբ մէկի հետ ուսուցիչն է պարապում: միւսները անձամբ են գործում: Բաժանմունքները երս կը միանան այն գեպքերում, երբ որ բոլոր երեւ բաժանմունքները կու նաշունց գոյն երիսուը ժողովն չբարձրան: Գ. Լ. Նոյն դործով և մուշտունքի: Արդեօք հնարաւոր է այսպիսի միաժամանակ զբաղումը. եթէ հնարաւոր լինի, հասկանալի է, թէ որքան ժամանակի անահետութիւն կունեն անք.

այն ժամանակ շատ քիչ պակաս բան կը մնայ, որ 26 դասը՝ 73ի արժեք
ստունայ:

Կայ այդպիսի արուեստ, և հին է: Այդ արուեստը քաջ հմտութեամբ
գործ էին դնում գերմանական ուսուցիչները, երբ որ նոցա մէջ 4, 5 և
6 միացեալ բաժանմունքներով ուսումնարաններ շատ էին տարածուած:
Այժմ այդպիսի ուսումնարանների թիւը խիստ պակասէ է, և միայն
ամենաղքատ, երկաթուղու ճանապարհերից դուրս, խուլ տեղերում
ցիր ու ցան պատահում են: — Մեզ ասել էին, թէ որքան որ Պրուսիայի
հիւսիսային նահանգների ուսուցիչները ուրիշ կողմերից կոսդիտ և վայրե-
նի են հռչակուած: այնքան զարմանալի արուեստով ուսուցանել դիտեն:
Մի անգամ Համբուրգ գնալիս ուր որ պիտի կոյանար գերմանական ու-
սուցիչների ընդհանուր ժողովը և աւելորդ ազատ օր ունենալով ճա-
նապարհից ծառցինք գէպի այդպիսի խուլ ընկած դիւզը, Արքան մեծ էր
մեր ուրախութիւնը, երբ որ տեղի ուսումնարանի դասացուցակից տե-
սանք, որ միացեալ բաժանմունքների ենք հանգիստել: Բայց որքան մեծ
էր և մեր հիասթափութիւնը, երբ որ տեղական ուսուցիչները իրանց
րեկտորի հետ ի միասին, մի քանի քաղաքավարական ձևերից յետոյ,
յանկարծ միարերան մերժեցին մեր ներկայութիւնը իրանց դասերին, պա-
հանցնելով որ Քառունք ու սպասենք: մինչև որ կարողանանք կանխառ հետ-
քուէ հրամանը ստանալ: (ի դէպ է մի համեմատութիւն, թէ լուսաւոր-
ւալ Պօմելնի առաջ կարծում ենք, որ Լ. Սարդառանի Այցի մէջ նկա-
րագրած Տաճկաստանը կարող է մընել) . . . Մի խօսքով մեզ ըլ յա-
ջողեցաւ գերմանական այդ արուեստը գործով տեսնել: Բայց ամենայն
հաւատացող Քրիստոնին չի տեսնել: Այսպէս էլ այն արուեստի տեսութիւ-
նից՝ գետուար չէ մակարերել նորա գործնականութիւնը:

Խոկ տեսութիւնը պարզ է: Նախ և առաջ տարրական ուսման մէջ ան-
շուշտ կան այնպիսի նիւթեր, որոնց աւանդութիւնը բաժանմունքներից բռ-
լորին ի միասին՝ անմոռութիւն պիտի համարուի: Զոր օր, երբ որ փոքրե-
րին առաջին անգամ սովորեցնում ենք այս-բնակ, այդ ժամանակ բարձր
բաժանմունքի աշակերտը ոչինչ սովորելու բան չունի: ուրիմն այդ գէպ-
քում բոլորի զբաղմունքները պէտք է բաժանուին և բնաւ չը միանան:
Այսպէս էլ երբ որ միջին բաժանմունքը բարձրացնելու այս-բնակ է անզիր
անում: աւելի լաւ է փոքրերին ուրիշ զբաղմունք տալ: որովհետև սոցա
համար գեռ ևս վաղ է այդ քան թուերի անզիր անելը: Այս օրինակնե-
րից մենք պէտք է այն հասկանանք: թէ շատ կը պատահին գէպքեր, ուր
որ բաժանմունքները զատ զատ զբաղուելով աւելի կը շահուին: Հիմա
գանք միացնելուն:

Զարմանալի է: թէ ինչպէս պէտք է միանան զանազան հասակի և զա-

Նազան ուսման աստիճանի աշակերտները, Այդ նշանակում է — կամ մեծերի գործը ճապաղեցնել, կամ փոքրերի գործը գժուարացնել, Բայց այդ վճիռը այն ժամանակ ճշմարիտ կը լինի, եթէ տարրական դասաւանդութեան պարտաւորութիւն համարուի կարգաբանեալ ուսման մատակարարումը, ուր իւրաքանչիւր քայլ միշտ նոր նիւթ է առաջ բերում, քան նախկինը, և աստիճանների շարունակ յաջորդութիւն է հաստատվում: Սակայն տարրական ուսման մէջ նիւթը այնքան նշանակութիւն չունի, — կուզէք կը բարձր մասին խօսեցէք, կուզէք մեխուն մասին, փոյթ չէ. բայց թէ ի՞նչ և ո՞րքան պէտք է խօսէք ձեր ընտրած նիւթի մասին, — այս է ամենակարեւորը: Տարրական ուսումը աւելի գործ ունի յիշողութեան հետ, քան դատողութեան հետ: Նա աւելի փորձական է, քան յանաւորական, աւելի մեքենական վարժութիւններ է տալիս, քան բարձր մտաւորական սնունդ: Մի խօսքով՝ նա աւելի յետո՞ւ, է, քան նիւթական, — Իսկ ձևական կողմից իւրաքանչիւր աշակերտ՝ աւելի կամ պակաս զարդացած է լինում: ըստ այնմ ևս ամենայն նիւթ իւրաքանչիւր աշակերտի հոգու մէջ՝ նորա զարդացման համեստ է ցոլանում և անդրադառնում: Այս խօսքերը այն են նշանակում, թէ շատ անգամ կարելի է զանազան բաժանմունքները ի միասին զբաղեցնել որոնցից է-բանալի-ը ոյնուն էլքունի հոգակունդ: Նէ-նէց, որուն որ ճառ-ճառ սկաների իշխող մինչեւ անէ: Այս տեղ յիշենք կանոնաւոր տարրական ուսման մի նշանաւոր յատկութիւն: Եթէ բարձր բաժանման աշակերտին է հրահանգում, նա վտանգաւոր ստիւններ չանելու համար՝ ոչ թէ ուղղակի բայց տեսակէտից գաղափար է տալիս մի նիւթի մասին, այլ ստորին տեսակէտից հետզնետէ բարձրանալով, մինչև որ հասնի աշակերտի բարձրագոյն ուժի կարողութեան, այսինքն ոտքին բաժանմունքների տեսակէտներից հետպհետէ բարձրանալով:

Նթէ այդ բոլորը ուղիղէ, այն ժամանակ ամենայն իրաւամբ կարող ենք երեք բաժանմունք երբեմն ի միասին նստեցնել, որ ժողով սահմանակիրէն գլ և այս նվազ ժամի առաջին մասը կը նուիրենք բոլորին, որ նզքա ամէնքը ժողովն տեսակէտից ըմբռնեն խնդիրը. ապա մենք ստորին բաժանման մի լուս զբաղմունք կուտանք, իսկ ժամի բաժանմ նոյն խնդրի ուսումնասիրութիւնը կը շարունակենք միայն միջին և բարձր բաժանմունքների հետ, որ սզքա սահմանակից գլ և բաժանմ տեսակէտից քննեն խնդնրը. վերջապէս միջին բաժանման ևս լուս զբաղմունք կուտանք, որ այնուհետև ժամի գ. մասում միայն վերին բաժանման հետ այնուած բաժանման, որքան որ նորա ընդունակութիւնը կը ներէ, Ահա և այդպիսի պարապման պատկերը.

բաժանմունք	Ա.	Բ.	Գ.
	մ ի ա ս ի ն		ա մաս դասի
	մ ի ա ս ի ն		բ . *
		մէնակ	գ . *

Բայց այս պատկերը չի նշանակում, իբր թէ գասերը միշտ միակերպ այդպէս պէտք է սկսուին և այդպէս վերջանան. Երբեմն հարկաւոր կը լինի ժամի բ. մասը նուիրել միայն Ա. բաժանմունքին, որպէս զի դա մեքանի կարևոր մանր վարժութիւններով առաջ գնայ.

մ ի ա ս ի ն
մէնակ

Կամ միայն Բ. բաժանմունքին.

մ ի ա ս ի ն
մէնակ

Կամ սկսել նաև մէնակ որ և իցէ մի բաժանմունքով և վերջացնել բոլորովի միասին.

մէնակ
մ ի ա ս ի ն

մէնակ
մ ի ա ս ի ն

մէնակ
մ ի ա ս ի ն

Վերջապէս հարկաւոր կը լինի միացնել ոչ թէ երեք բաժանմունքները՝ այլ որ և է երկուսը (Ա—Բ, Ա—Գ, Բ—Գ). Եվսնին հասկանալի է, թէ երբեմն օրը այնպէս կանցնի, որ բաժանմունքները բնաւ չեն միանայ,

երբեմն էլ այնպէս, որ օրական բոլոր դասերը միշտ միացած բաժանմունքներում կաւանդուին:

Նիւթի և առարկայի յարմարութեան համեմատ այսպիսի փոփոխութիւններ անելով, մի և նոյն ժամանակ չը պէտք է կորցնել ընդհանուր շահութանը: Պէտք է ամենայն շարաթ, իսկ եթէ այս անհնարին լին, ամենայն ամիս՝ տեսնել հաշիւը, թէ արդեօք ո՞ր բաժանմունքը ո՞րքան է առաջ գնացել ծրագրի պահանջների համեմատ: իսկ եթէ պակասներ և անհամեմատութիւններ երեան, անշուշտ պէտք է հետևեալ ամսում բոլորը լրացնել և կարգի բերել: Աւելի լաւ է շարաթը մի քանի դաս որոշած ունենալ՝ նկատած անհարթութիւնները համապատասխան բաժանմունքի մէջ վերացնելու համար:

Արդեօք բաժանմունքները ո՞ր դասի ժամանակ միանան և ո՞ր դասին զատ զբաղուին: այս կախուած է նիւթի յարմարութիւնից, որ ծնանում է պէսպէս վարժութեանց հեշտութեան և դժուարութեան խնդիրներ: Ուսուցիչը նախ և առաջ նիւթի յարմարութիւնը պէտք է կշռադատէ, որ ըստ այնմ միացնելին միացնելու՝ և զատելին զատելու որոշէ: Թէ ո՞րոնք են նիւթի զանազանակերպ խնդիրները իրանց գժուարութեանց կամ բարգութեանց աստիճաններով: այդ մենք «Արարատի» մէջ ցոյց ենք տուել շատ առարկաների վերաբերութեամբ:

Բայց աւելորդ չէ որ այս տեղ մի թեթև ուրուագծով նշանակենք իւրաքանչիւր առարկայի միանալու յարմարութիւնը:

Կամ: Տօների բացատրութիւնը ամենայն տարի կրկնվում է, ուրեմն բարձր բաժանման հետ ամենայն յարմարութեամբ կարող են միւս բաժանմունքները միանալ: Երբեմն նոր դասը լսելու (իւրաքանչիւրը իւր աստիճանով) և երբեմն հինը կրկնելու համար: Անդիր անելը (շարականներ, աղօթքներ) թէպէտ զատ վարժութիւն է պահանջում: բայց ըստ յարմարութեան կարելի է առաջ տանել նաև լսողութեան տպաւորութեամբ: օգուտ քաղելով բարձր բաժանման աշակերտների աւելի ընտիր արտասանութիւնից:

Լւզներ (հայոց ռուսաց): Այս տեղ էլ յիշողութիւնն ու լսողութիւնը մեծ գեր է կատարում: Բանաւոր և ընթերցանութեան վարժութիւնները մեծ մասով կարելի է աւանդել միացնեալ բաժանմունքներին: Դրաւոր վարժութիւնները և մանաւանդուինուն դրագիտութիւնը (մեքենական) զատ գործ պէտք է համարուի: բայց այս արգելք չէ՝ որ երբեմն գրաւորը առժամանակ բոլորին միացնէ, ի հարկէ նիւթի յարմարութեան նայելով *): Իւղղական դառները լեզուի՝ մանաւանդ բանաւոր

*) Տես «Արարատի» մէջ առաջ ու այս բէն լեզուի դաստաւութիւն ծխական ու-

վարժութեանց՝ մի մասն են կազմում և հիմնուած են գործութեան առջեկութիւնների վերաբ. ուրեմն միշտ կարելի է դասը միասին սկսել^{**})

Թե՛ այս պատճեանութեան մասն առաջ եմէ ի հաշիւ առնենք, թէ ամբողջ թուարանութիւնը տասնորդական դրութեան վերաց է հիմնուած, այն ժամանակ միացնելու առիթներ շատ կունենանք, մանաւանդ դասերի սկզբներում երկրորդ բաժանման խնդիրը՝ թէ $30 + 20 = 50$, ոչինչով տարբեր չէ առաջին բաժանման խնդիրը՝ թէ $3 + 2 = 5$, եմէ ասել տասնք, թէ 3 տաս + 2 տաս = 5 տաս:

Գշտանք, ևմենայն դաս պէտք է սկսուի այն հիմնութեան գծերը զրկել տալով՝ օրոշցից որ կազմվում են դասի զլիաւոր սիմֆ կազմող տառերն ու ամբողջ խմբերը (բառեր, նախադասութիւններ). Հիմնական գծերի միասին վարժեցնելը — միշտ օգտաւէտ է. Մինչեւ անգամ աւելորդ չէ՝ որ իւրաքանչիւր աւագ աշակերտի մօտ նստած լինի մի կրտսեր աշակերտ (եթէ գրասեղանները արգելվ չեն), և վերջինը իւր աշքով տեսնի ընկերի ձևացումները. այս տեղ տեսողութիւնը այն նշանակութիւն ունի ինչ որ վերը ունէր լուղութիւնը. Նիշտանք համար նշյնը պէտք է ասուի:

ԵՐԵՎԱՆԻ ՊՐԵՄԻԱ: Մեծ մասով միասին: —

Այս բոլոր ասածներից արդեօք պարզուեցաւ, միացումների հնարաւորութիւնը, բայց և մեծամեծ գժուարութիւնները: Ուստի զգուշացնում ենք այն ուսուցչին, որ յանձն է առնում միացեալ բաժանմունքների մէջ դաս տալը, թողնա քայլ առ քայլ և հետզետէ փորձէ դասերի միացումները, մինչև որ գործի նորութեան ընտելանայ. իսկ սկզբում աւելի զատ զատ զբաղեցնէ բաժանմունքները, ի հարկէ ոմանց լուր զբաղմոնք տալով:

Մի կարգագրութիւն էլ կարելի է անել որպի գործը բաւական կը դիւրանայ, բայց որը կոպարների մէջ նախատեսնուած չէ: Եթէ ուսուցիչը յանձն առնէ օրական մի ժամ սահմանածից աւելի պարագել այն ժամանակ բաժանմունքների դասերը աւելի յարմար կերպով կը բաշխուին: Բայց առաջարկ ուղարկուելու հոգ ուղարկուելու վերաբերութեան մէջ այս հնարաւոր կը լինի, եթէ առաջաները բաժանմունքներից ամենքը մի և նոյն ժամին չափեն իրենց դա-

սումաբաններում՝ յօդուածի զոր օր, այն մասը, որ խօսում է գրտոր վարժութեանց սատիթանների մօսին (գրի առնուլը կամ արձնացումը), Այսուհետեւ «Հարաբիւական վարժութեաններ», յօդուածի շարժանակութեան մէջ միացեալ բաժանմունքների պարագմանը եւս ի նկատի կունենանք:

*) Տ. Քիրազնական գասերաւ:

սերը, Այլ թող գայ նախ մի բաժանմունք և մի ամբողջ ժամ միայն գա առանձնակի զբաղուի, այնուհետեւ գան և միւսները՝ որով բաժանմունքները կը միանան, առաջին եկողները՝ իրանց սահմանած դասերը առնելուց յետոյ՝ թող միւսներից մի ժամ առաջ ևս վերջացնեն իրանց օրական պարապմունքը, որով վերջին եկողները դեռ ևս մի ամբողջ ժամ կունենան պարապելու, բայց առանձնակի, — Այս ձեւը ինչպէս ասացինք, կոպարներից գուրս լինելով, և մանաւանդ ուսուցչի աւելորդ դասի համար վարձատրութեան նոր խնդիր առաջացնելով, գործադրութիւն ստանալ չի կարող, մինչև որ առանձին հրաման չը խնդրուի բարձր հոգեւոր վարչութիւնից:

Աերջացնենք մի նկատողութեամբ, որ աւելի հոգաբարձութեանց կը վերաբերի: Միացեալ բաժանմունքների համար երեք ձև կայ սահմանած, իւրաքանչյուրից երկու կոպար. նոցա մէջ ամենից դժուար գործադրելին է ա. ձեւը, ոչ այնքան դժուար է՝ բ. ձեւը, իսկ ամէնից հեշտն է՝ գ. ձեւը: Արդ եթե հոգաբարձութիւնը չի դանում հարու ուսուցիչ բայց ցանկանում է բաժանմունքները միացած ունենալ, թող ընտրէ գ. ձեւը, որպէս աւելի վստահանալին:

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ.

ԱԶԳԱՅԻՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՈԴԵԽՈՐ ՃԵՄԱՐՄՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԵԶՄԻԱԾՆԻ

1889—90 ամ.

Անցեալ սեպտեմբեր ամսոյ 29ին հանդիսաւոր կերպով տօնուեցաւ Մայր Աթոռոյս ճեմարանի վեշտասաներորդ տարեդարձը, Ս. Պատարագից յետին եներկայութեան միաբանութեան Մայր Աթոռոյս, բոլոր ուսուցչաց և աշակերտաց ճեմարանիս և խուռն բազմութեան ուխտաւոր ժողովրդոց կատարուեցաւ հոգեհանդիս ճեմարանի հիմնադիր հանդուցեալ Տ. Գէորգ Կաթուղիկոսի գերեզմանի վերայ. Այդ օրը եղանակը շատ լաւ էր ու անորժելի. ուստի և ճեմարանում հանդէսը կատարուեցաւ բայց երկնքի